



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՄ



ԱՆԱԹՈԼ ՖՐԱՆՍ

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԵԶԸ

210

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Զ.



ԲԱՐԻՉ

ՏՊԱՐԱՆ «ԱՆՆՆՆԻՍ»

1901

05 FEB 2014

3125



447
41



Ե Պ Ի Կ Ո Ի Ր Ի Պ Ա Ր Տ Է Ջ Ը

—o—o—

*
* *



ԱՆԱԹՈՒ ԶՐԱՆՍ

Հիմա դժուարութիւն կը կրենք ըմբռնելու մտաւոր վիճակը հին աստեղուան մարդու մը , որ հաստատապէս կը հաւատար թէ երկիրս տիեզերքին կեդրոնը կը կազմէ եւ թէ բոլոր աստղերն անոր շուրջը կը դառնան : Ան իր ուղեբուն տակ մեղաւորներու գալարումը կը զգար բոցերուն մէջ , եւ թերեւս աչքովը տեսած ու ընդունքովն հոտոտած էր դժոխքին ծծմբոտ մութը՝ ժայտի ճեղքէ մը դուրս փախած : Աչքերը դէպ ի վեր դարձուցած ատեն , կը դիտէր տասերկու ոլորտները , տարրերու ոլորտը որ օդն ու հուրը կը պարունակէ , յետոյ Լուսնին , Արուսեակին , Փայլածուին ոլորտները՝ զորոնք Տանթէ այցելեց 1300ի աւագ ու բաթ օրը , յետոյ Արեւին , Հրատին , Լուսնթագին ու Երեւակին ոլորտները , յետոյ՝ անապական Հաստատութիւնը որմէ կախուած էին աստղերը ինչպէս կանթեղներ : Մտքովն այդ հայեցողութիւնը երկարաձգելով , անկից անդին կը նշմարէր՝ իմացական աչքերով , իններորդ

երկինքն ուր սուրբերը յափշտակուեցան ,
 բրիւնով մուսիկին (առաջին շարժուն ուրորտը)
 կամ բիւրեղայինը, ու վերջապէս Վերնագաւա-
 ուր, բնակարանը երանելիներուն , ուր՝ մահէն
 յետոյ՝ երկու սպիտակագեաց հրեշտակներ
 (այդ մասին հաստատ էր իր յոյսը) պիտի
 տանէին՝ պղտիկ տղու մը պէս՝ իր հողին, մկրը-
 տութիւնով լուացուած ու վերջին օծումին
 իւրը՝ խնկաւէտի՝ Այդ ժամանակները , Ա.ս.
 սուած մարդոցմէ ուրիշ զաւակ չունէր , եւ
 իր բոլոր արարչագործութիւնը միանգամայն
 տղայական ու բանաստեղծական եղանակով
 մը կարգադրուած կ'երեւակայէին , անհուն
 մայր-եկեղեցիի մը նման : Այսպէս ըմբռնուե-
 լով , տիեզերքը այնքան պարզ էր որ զայն
 ամբողջութեամբ կը պատկերացնէին , իր ճըշ-
 մարիտ ձեւովն ու շարժումովը, տեսակ մը մե-
 քենաւոր ու նկարէն խոշոր ժամացոյցներու
 մէջ : †

Ոչ եւս են հիմա տասերկու երկինքներն
 ու մոլորակները որոնց ներքեւ մարդ երջա-
 նիկ կամ աղերջանիկ , զուարթ կամ սատուր-
 նական կը ծնէր : Հաստատութեան ամուր կա-
 մարը խորտակեցաւ . մեր աչքն ու մեր միտքը
 երկինքին անվախճան անդունդներուն մէջ կը
 մխրճին : Մոլորակներէն անդին , կը գտնենք ,

ոչ թէ արդարներու եւ հրեշտակներու Վեր-
 նագաւառը , այլ հարիւր միլիոններով արեւ-
 ներ որ կը թաւալին , իրենց անշուք ու մեղ
 համար անտեսանելի արբանեակներուն հետե-
 ւագունդովը պաշարուած : Աշխարհներու այս
 անհունութեան մէջ , մեր արեւը կազի պղզ-
 պղջակ մըն է լոկ եւ երկիրը ցեխի կաթիլ
 մը : Մեր երեւակայութիւնը կը ցասկոտի ու
 կը զարմանայ երբ մեզի կ'ըսեն թէ այն լու-
 սեղէն ճաճանչը որ բեւեռային աստղէն մեզի
 կը հասնի , կէս դարէ ի վեր ճամբայ ելած
 էր եւ թէ սակայն այդ գեղեցիկ աստղը մեր
 դրացին է եւ Շնիկին ու Արջագիւն հետ ա-
 մենէն մօտիկ քայրերէն մին մեր արեւին :
 Աստղեր կան զոր գեռ կը տեսնենք հեռագի-
 տակով , եւ որոնք երեք հազար տարի առաջ
 արդէն մարած են :

Աշխարհները կը մտնին , քանի որ կը
 ծնին : Անգագար աշխարհներ կը ծնին եւ աշ-
 խարհներ կը մեռնին : Եւ արաբչութիւնը, միշտ
 անկատար , կը շարունակուի անընդհատական
 կերպարանափոխութեանց մէջ : Աստղերը կը
 մեռնին , բայց մանք չենք կրնար ըսել թէ այդ
 լոյսի աղջիկները , այդպէս մեռնելէ յետոյ ,
 իբրեւ մոլորակ՝ արգաւանդ կեանք մը չեն
 սկսիր , եւ թէ մոլորակներն ալ չեն տարրալու-

ծուիր նորէն աստղ դառնալու համար : Գիտենք միայն թէ զողար չկայ երկնաւոր տարածութիւններուն մէջ, ինչպէս չկայ զսփար երկրիս վրայ, եւ թէ աշխատութեան ու ճիգի օրէնքը կը վարէ աշխարհներու անհունութիւնը :

Աստղեր կան որ մեր աչքին առջեւ կը մարին, ուրիշներ որ կը պլպլան՝ մոմի մը առկայ՝ բոցին պէս : Երկինքը, որ անապական կը կարծուէր, ուրիշ ոչինչ գիտէ յաւերժական բայց եթէ յաւերժական հոսումն իրերուն :

Թէ գործարանաւոր կեանքը տարածուած է բոլոր տիեզերքին մէջ, այս մասին գծուար է տարակուսիլ, եթէ չուզենք ենթադրել թէ գործարանաւոր կեանքը արկած մը, գծրազդ զխաղած մըն է՝ ողբալի կերպով պատահած սա ցեխի կաթիլին մէջ ուր կը գանուինք :

Բայց աւելի խելքն մօտ է հաւատալ թէ կեանքը յառաջ եկած է մեր զրութեան բոլոր մոլորակներուն վրայ՝ որոնք երկրին քոյրերն են եւ անոք պէս զուստր արեւուն, եւ թէ այնտեղ յառաջ եկած է պայմաններու մէջ որոնք բաւական նման են այն պայմաններուն որոնց մէջ ան ի յայտ կուգայ հոս՝ կենդանական ու բուսական ձեւերով : Երկնաքաղերուն մէջ, տեսնուած է հատ մը որ քարպոն կը պարունակէր : Մեզ աւելի շնորհալի կեր-

պով համոզելու համար, պէտք էր որ հրեշտակները, որոնք սրբուհի Դորոթէին Արքայու թեկնէն ծաղիկներ բերին, նորէն մեր մէջ իջնէին իրենց երկնաւոր զրասանդներովը : Հրատը, իր բոլոր երեւոյթներէն զտակելով, բնակելի է երկրիս կենդանիներուն ու բոյսերուն նմանող էակներու համար : Հաւանական է որ բնակուած է քանի որ բնակելի է. վստահ եղէք որ այս պահուս հոն իրար կը բզքտեն :

Աստղերու յօրինուածութեան միութիւնը հիմա հաստատուած է ուրուային վերլուծումին չ'որհիւ : Ասոր համար է որ պէտք է մըտածել թէ այն պատճառները որ կեանքը բըզխեցուցին մեր միգամածէն, զայն կը ծնուցանեն բոլոր միւս միգամածներուն մէջ : Երբ կեանք կ'ըսենք, գործարանաւոր նիւթին գործունէութիւնը կ'ըմբռնենք՝ այն պայմաններուն մէջ ուր կը տեսնենք անոր յայտնուիլը երկրիս վրայ : Բայց կարելի է որ կեանքը յառաջ գայ նաեւ տարբեր միջավայրերու մէջ, շատ բարձր եւ շատ ցած բարեխառնութիւններով, անըմբռնելի ձեւերու տակ : Կարելի իսկ է որ ան յառաջ գայ եթերային ձեւով մը՝ մօտերնիս, մեր մթնոլորտին մէջ, եւ թէ պաշարուած ըլլանք հրեշտակներով, զորոնք եր-

բեք պիտի չճանչնանք , որովհետեւ ծանօթու-
թիւնը յարաբերութիւն մը կ'ենթադրէ , եւ
անոնց ու մեր միջեւ ո եւ է յարաբերութիւն
անհնար է որ դոյութիւն ունենայ :

Կարելի է նաեւ որ սա միլիոնաւոր արեւ-
ները , միացած այն միլիարներուն զոր չենք
տեսներ , ամենը մէկանց արիւնի կամ աւելի
գնդիկ մը կը կազմեն լոկ՝ մարմնոցն մէջ ա-
նասունի մը , աննշմարելի միջատի մը , որ
փթթած է աշխարհի մը մէջ որուն մեծութիւնը
չենք կրնար ըմբռնել , եւ որ ինքն իսկ , բազ-
դատուելով այսինչ աշխարհին , փոշիի հատիկ
մը պիտի ըլլար : Անխմաստ չէ նաեւ ենթադ-
րել թէ մտածման ու իմացականութեան տար-
բեր կ'ապրին ու կը մեռնին մեր առջեւ՝ մէկ
րոպէի միջոցին՝ միակ հիւլէի մը մէջ : Իրերն
ինքնին ոչ մեծ են ոչ փոքր , եւ երբ տիեզերքը
ընդարձակ կը գտնենք , ըզրորովին մարդկային
զաղափար մըն է այդ : Եթէ ան յանկարծ կա-
ռինի մը ծաւային վերածուէր՝ ամէն բան իր հա-
մեմատութիւնները պահպանելով , ոչ մէկ կեր-
պով այդ փոփոխութիւնը պիտի չնշմարէինք :
Բեւեռային աստղը , մեզը հետ կազինին մէջ փա-
կուած , նորէն յիսուն տարիէն պիտի կարենար
իւր լոյսը մեզի հասցնել . եւ երկիրս , հիւլէէ մը
աւելի փոքր դարձած , պիտի ոտողուէր նոյն-

քան արցունքով եւ արիւնով որքան այսօր : Ինչ
որ հիւանալի է , աստղերու դաշտին այնքան
մեծատարած ըլլալը չէ , այլ մարդուն զայն չա-
փել կըցած ըլլալը :

* * *

Մեծ սխալ մըն է կարծելը թէ գիտա-
կան ճշմարտութիւնները իսկականօրէն կը
տարբերին հասարակ ճշմարտութիւններէն :
Տարածութեամբ ու որոշութեամբ միայն ա-
նոնցմէ կը տարբերին : Գործնական տեսակէ-
տով , այդ տարբերութիւնը ահագին է : Բայց
պէտք չէ մոռնալ թէ գիտունին գիտողութիւ-
նը արտաքին տեսքին ու երեւոյթին վրայ
կանգ կ'առնէ , առանց երբեք կարենալու նիւ-
թին մէջը թափանցել կամ իրերու ճշմարիտ
բնութիւնն ըմբռնել : Մանրագէտով ղինուած
աչք մը , ասով չի դադրիր մարդկային աչք
մը ըլլալէ : Ուրիշ աչքերէ աւելի կը տեսնէ ,
տարբեր չի տեսներ : Գիտունը կը բազմապատ-
կէ մարդուն առնչութիւնները բնութեան հետ ,
բայց անկարող է ոչ մէկ կերպով փոփոխել
այդ առնչութիւններուն էական նկարագիրը :
Նը տեսնէ թէ ինչպէս յառաջ կուգան կարգ
մը երեւոյթներ որ մեր ըմբռնողութիւնէն կը
վրիպին , բայց իրեն ալ՝ ինչպէս մեզը՝ ար-

գելուած է փնտըսել թէ ինչո՞ւ յառաջ կու-
 գան : Բարոյական մը ուզել բնութենէն , ինք-
 զինքը անդու թ յուսախաբու թ իւննեքու են-
 թարկել է : Երեք հարիւր յարի առաջ կը կար-
 ծէին թէ երկիրս արարչութեան կեդրոնն էր :
 Հիմա գիտենք թէ արեւին մէկ պաղած կա-
 թիւն է : Գիտենք թէ ի՞նչ կազեր կ'այրին ա-
 մենահեռաւոր աստղերու մակերևոյթին վրայ :
 Գիտենք թէ տիեզերքը , որուն մէջ թափափիկ
 փոշի մըն ենք , յաւիտենական երկունքով
 մը՝ կը ծննդարեւի ու կը լսփիէ . գիտենք
 թէ անդադար աստղեր կը ծնին եւ աստղեր
 կը մեռնին : Բայց մեր բարոյականը ի՞նչ փո-
 փոխութիւն կրցած է կրել՝ այսքան վիթխա-
 րի գիւտերու ազդեցութեամբ : Միթէ մայրերն
 հիմա ատոր համար իրենց մանուկներն աւելի՞
 կը սիրեն կամ նուա՞զ : Ատոր համար կիներու
 գեղեցկութիւնն աւելի կամ նուա՞զ կը զգանք :
 Սիրաբ ուրի՞շ կերպով կը արփիէ հերոսներուն
 կուրծքին տակ : Ո՛չ , ո՛չ , երկիրս մեծ ըլլայ
 կամ պզտիկ , ասի կարեւորութիւն չունի մար-
 դուն համար : Բաւական մեծ է ան՝ որպէսզի
 հոն տառապինք , որպէսզի հոն սիրենք : Տա-
 ռապանքը եւ սէրը , ահա՛ իր անսպառ գեղեց-
 կութեանը երկու երկուորեակ ազրբւրները :
 Տառապա՛նքը , ի՞նչ աստուածային անիրաւ-

ուած : Անոր կը պարտինք ամէն ինչ որ կայ
 մեր մէջ բարի , ամէն ինչ որ զին՝ կուտայ
 կեանքին . անոր կը պարտինք զթութիւնը ,
 անոր կը պարտինք քաջարտութիւնը , անոր
 կը պարտինք բոլոր առաքինութիւնները : Եր-
 կիրս աւազի հատիկ մըն է աշխարհներու ան-
 ծայրածիր անապատին մէջ : Բայց եթէ միայն
 երկրիս վրայ է որ տառապանքը դոյու թիւն ու-
 նի , երկիրս աւելի մեծ է քան տիեզերքի բո-
 լոր մնացեալ մասը : Ի՞նչ կ'ըսեմ . ամբողջու-
 թիւնն է ան եւ մնացեալը ոչինչ է : Որովհե-
 տեւ , անկից դուրս , ոչ առաքինութիւն կայ
 ոչ հանճար : Ի՞նչ է հանճարը , եթէ ոչ տառա-
 պանքը հմայելու արուեստը : Զգացման վրայ է
 միայն որ բարոյականը կը յնոււ բնականօրէն :
 Շատ մեծ մտքեր , զիտեմ , ուրիշ յոյսեր մնու-
 ցած են : Որնան յօժարակամ անճնատուր կ'ըլ-
 լար՝ ժպտելով՝ զիտական բարոյականի մը երա-
 զին : Գիտութեան վրայ գրեթէ անսահման վըս-
 տահութիւն մը ունէր : Կը կարծէր թէ ան աշ-
 խարհս պիտի փոխէր , քանի որ լեռները կը
 ճեղքէ : Չեմ հաւատար , իրեն պէս , որ ան կա-
 րենայ մեզ աստուածացնել : Շիտակն ըսելով ,
 փափաք ալ չունիմ ատոր : Իմ մէջս նոյն իսկ
 ամենափոքր աստուծոյ մը խմորը չեմ զգար :
 Իմ տկարութիւնս սիրելի է ինձի : Իմ անկատա-

բուժիւնս ինծի քաղցր է ինչպէս իմ գոյու-
թեան պատճառս :

*
*
*

Նա երբեք համամիտ չեմ եղած այն հա-
կակրութեան զոր վոտվելիութիւնները կը տածեն
տոքթորութիւններու նկատմամբ : Եթէ կին մը գի-
տութեան կոչում բռնի, ի՞նչ իրաւունքով զինքը
պիտի մեղադրենք իր ճամբէն քալած ըլլալուն
համար : Ի՞նչպէս կարելի է այսպանել այդ ազ-
նիւ ու քաղցր ու իմաստուն Սոփի Ժեյմէնք
որ փան ու ընտանիքի հոգերէն նախամեծար
համարեցաւ ալճեպրային ու բնազանցութեան
լոկի խոկումները : Գիտութիւնը չի՞ կրնար
միթէ , կըօնքին պէս , իր կոյսերն ու սարկա-
ւազուհիներն ունենալ : Եթէ բոլոր կիները
ուսումնական ընել ուզելը քիչ բանաւոր է , մի-
թէ բանաւոր է մտածման բարձր հայեցողու-
թիւններն անոնց ամենուն արգելելը : Նւ բու-
լորովին դորձնական տեսակէտով մը , միթէ գի-
տութիւնը , տեսակ մը պարազաններու մէջ ,
կնոջ համար , թանկագին ապրուստի միջոց մը
չէ՞ : Որովհետեւ այսօր պէտք եղածէն աւելի
ուսուցչուհի կայ , հա՞րկ է որ այսպանենք այն
աղջիկները որ զիրենք ուսուցչութեան կը
նուիրեն , հակառակ յայտադրներու անգութ

տխմարութեան եւ մրցումներու անարդար դա-
տաստանին : Քանի որ միշտ ընդունած են թէ
կիները զմայլելի ճարպիկութիւն մը ունին
հիւանդները խնամելու , քանի որ անոնք ամէն
ժամանակ մխիթարիչներ ու բուժիչներ են
եղած , քանի որ հիւանդապահներ ու ման-
կաբարձուհիներ կը հայթայթեն ընկերութեան ,
ի՞նչպէս կարելի է չգովել իրենցմէ անոնք որ
գոհ չըլլալով հարկաւոր նախաժարութեամբը ,
մինչեւ տոքթորութիւն յառաջ կը տանին ի-
րենց բժշկական ուսումնասիրութիւններն եւ
այդպէսով իրենց արժանապատուութիւնն ու հե-
ղինակութիւնը կը բազմապատկեն :

Պէտք չէ սեթեւեթող ու իմաստակ կիներու
դէմ զգացուած ատելութիւնը մեզ ծայրայե-
ղութեանց մղէ : Ընմարիտ է որ ոչինչ այնքան
զգուելի է որքան իմաստակուհին : Գալով սե-
թեւեթող կիներուն , պէտք է զանազանել : Վա-
յելչասիրութիւնը միշտ անձան չէ , եւ սիրուն
կերպով խօսելու ձգտում մը կին մը չ'աւրեր :
Եթէ տիկին ար Լաֆայեթ սեթեւեթող մըն է ,
(իւր ատենը զինքն այդպէս կը նկատէին) , սեթե-
ւեթողները պիտի չատեմ : Ամէն կեղծում գար-
չելի է , թուրչին կեղծումն ինչպէս փետուրինը .
եւ քիչ հրապոյր պիտի ունենար ապրիլ այն ըն-
կերութեան մէջ զոր Բրուտոն կ'երազէր եւ ուր

բուր կիները խոհարար ու կարկտող պիտի
 ըլլային : Կ'ընդունին որ կնոջ մը համար
 նուազ բնական է, եւ հետեւաբար նուազ շնոր-
 հալի , զիւրք մը խմբադրելը քան թատերգու-
 թիւն մը խաղալը , բայց կին մը որ գրել գի-
 տէ , իրաւունք չունի գրելէ հրատարելու՝ եթէ
 ատի իր կեանքը չի խանդարեր : Առանց հա-
 շուելու որ կաղամարը իրեն բարեկամ մը
 պիտի կարենայ ըլլալ՝ երբ հարկ ըլլայ ցաւա-
 գին քայլն առնել յիշատակներու տարիքը
 մտնելու համար : Անտարակուսելի է որ եթէ
 կիները այրերէն լաւ չեն գրնր , ուրիշ կերպով
 կը գրեն եւ իրենց աստուածային շնորհէն
 թղթին վրայ քիչ մը կը թափեն : Իմ մասիս
 շատ երախտագէտ եմ տիկին տը Գէյլլիւսին եւ
 տիկին տը Սթալ-Տըլոնէին՝ անմահ «ճանճի
 թաթ»եր ձգած ըլլալուն համար :

Գաղափարներու ամենէն նուազ իմաս-
 տասիրականը պիտի ըլլար երեւակայել թէ գի-
 տութիւնը կնոջ մը կամ աղջկան մը բարոյա-
 կան գրութեան մէջ օտար մարմնոյ մը պէս ,
 անհաշուելի զօրութիւն ունեցող խաթարիչ
 տարրի մը նման կը մտնէ : Բայց եթէ բնական
 ու օրինաւոր էր աղջիկներուն ուսում տալ
 ուղիւր , տարակոյս չկայ թէ այդ բանը շատ
 յոռի կերպով կատարած են . բարեբախտաբար

կը սկսին այդ սխալը խոստովանիլ : Գիտու-
 թիւնը մարդուն կապն է բնութեան հետ .
 կիներն ալ պէտք ունին՝ մեզի պէս՝ ծանօ-
 թութեանց մաս մը ունենալու : Այն եղանակը
 որով ուզած են անոնց ուսում տալ , տիեզեր-
 քին հետ անոնց առնչութիւնները բազմապատ-
 կելէ շար հետու , զիւրենք վատած ու կարծես
 անջատած է բնութենէն : Բառեր սորվեցու-
 ցած են անոնց , եւ ոչ թէ իրեր , եւ անոնց
 գլխուն մէջ պատմութեան , աշխարհագրու-
 թեան ու կենդանաբանութեան երկայն անուա-
 նացուցակներ թխմած են , որոնք ինքնին ոչ
 մէկ նշանակութիւն չունին : Այդ անմեղ ա-
 բարածները իրենց բեռը կրած են , իրենց բե-
 ուէն ալ աւելին , այդ անարդար յայտագիրնե-
 րէն զոր աամկալարական գոռոզութիւնն ու
 պախալական հայրենասիրութիւնը տիրա-
 ցութեան բարելներու պէս կանգնեցին :

Սա անիմաստ գաղափարէն մեկնած էին
 թէ փողովուրդ մը գիտուն է երբ անոր բոլոր
 անգամները միեւնոյն բանը գիտեն , որպէս թէ
 պաշտօններու այլազանութիւնը իրեն բնա-
 կան հետեւանք չունենար ծանօթութեանց
 այլազանութիւնը , եւ որպէս թէ օգտաւէտ
 ըլլար որ խանութպան մը բժիշկի մը գիտցածը
 գիտնար : Այս գաղափարը շատ մը սխալներու

ծնունդ տուաւ . զլիաւորապէս , յաւաջ բերաւ
 ուրիշ գաղափար մը՝ իրմէ աւելի անպիտան :
 Երեւակայեցին թէ մասնաւոր գիտութեանց
 տարերքը օգտակար են այն անձերուն որ սան-
 մանուած են անոնց ոչ կիրարկութիւնովն
 զբաղելու ոչ տեսական մասովը . երեւակայե-
 ցին թէ անդամազննութեան մէջ՝ օրինակի
 համար՝ կամ քիմիաբանութեան մէջ , բառագի-
 տութիւնը ուրոյն արժէք մը ունէր , եւ թէ շահ
 մը կար զայն գիտնալու մէջ՝ վիրաբոյժներէն
 ու քիմիագէտներէն գործածուելու գաղափա-
 րէն անկախաբար : Այս աւելորդապաշտու-
 թիւնն այնքան յիմար է որքան հինաւուրց
 սկանափնաւներունը՝ որոնք ունական տառե-
 րով կը գրէին եւ կը կարծէին թէ բառեր կան
 ա՛յնքան զօրաւոր , որ եթէ երբեք արտասա-
 նուէին , կարող էին արեւը մարել եւ երկիրս
 փոշի դարձրնել :

Արդահատանքէն կը ժպտի մարդ երբ
 կը մտաբերէ այն մանկավարժները որ սղոց
 կ'ուսուցանեն բառերը լեզուի մը զոր ատոնք
 ո՛չ լսելիք ունին երբեք ո՛չ խօսելիք : Այդ պա-
 տուելիներուն ըսածին նայելով , գիտութեանց
 տարերքը սորվեցուցած կ'ըլլան եղեր ատով
 եւ աղջիկներուն ամէն բանի վրայ գաղափար
 մը տուած : Բայց ո՛վ չի նկատեր թէ ատով ա-

մէն բանի վրայ անոնց միտքը միջոցուցած կ'ըլ-
 լան , եւ թէ այդ թաւո՛ր գլուխներուն մէջ ,
 որոնք կակուղ են ու թեթեւ , գաղափարներ դնե-
 լու հա մար , բոլորովին տարբեր մեթոտ մը պէտք
 էր գործածել : Քիչ խօսքով գիտութեան մը մեծ
 առարկաները ցոյց տուէք , անոր արդիւնքները
 մասնանիչըրէք քանի մը ուշագրաւ օրինակնե-
 րով : Ընդհանրացնող եղէք , փիլիսոփայ եղէք , եւ
 ձեր փիլիսոփայութիւնը այնպէս լաւ ծածկեցէք
 որ ձեզ այնքան պարզ կարծեն որքան այն
 մտքերը որոնց կը խօսիք : Ներկայացուցէք
 առանց խրթնութեան , ամենուն խօսած հասա-
 րակ լեզուովը , կարգ մը սակաւաթիւ իրողու-
 թիւններ որ երեւակայութեան վրայ ազդե-
 ցութիւն գործեն եւ իմացալէանութիւնը գո-
 հացնեն : Թող ձեր խօսուածքը միամիտ , մեծ ու
 վեհանձն ըլլայ : Շատ տեսակ բաներ ուսու-
 ցանելը պարծանք մի՛ համարիք ձեզի : Միայն
 հետաքրքրութիւնը գրգռեցէք , մտքերը բանա-
 լով զոհացէք , ու մի՛ ծանրաբեռնէք զանոնք :
 Կա՛յծը գրէք հոն : Իրենք իրենցմէ պիտի բռն-
 կին , այն կողմէն ուր ամենէն աւելի բորբոքե-
 լի են :

Ու եթէ կայծը մարի , եթէ տեսակ մը իմա-
 ցականութիւններ մտելը մնան , դոնէ դուք
 խանձած պիտի չըլլաք զանոնք : Մեր մէջ միշտ



տղէտներ պիտի ըլլան : Պէտք է յարգել բոլոր
 բնութիւնները եւ իրենց պարզութեան վիճակին
 մէջ թողուլ անոնք որ այդ վիճակին սահմանուած են : Ատի մասնաւորապէս հարկաւոր է
 աղջիկներուն համար որոնք մեծ մասամբ երկրիս
 վրայ իրենց կեանքը կ'անցընեն այնպիսի
 գործերու մէջ ուր ընդհանուր գաղափարներէ
 եւ մասնագիտական ծանօթութիւններէ բոլորովին
 տարբեր բան է իրենցմէ պահանջուածը :
 Կ'ուզէի որ աղջիկներու արուած ուսումը , ա-
 մէն բանէ առաջ՝ զբուշաւոր ու մեղմ գրգում մը
 ըլլար :

Այս օրերս գերք մը կարգացի որուն մէջ
 խմատասէր բանաստեղծ մը ուրախութենէ ,
 ցաւէ ու հետաքրքրութենէ զերծ մարդիկ ցոյց
 կուտայ : Այդ նոր երազաշխարհէն դուրս ել-
 լելուդ , երբ շուրջդ կը տեսնես մարդիկ որ
 կը մաքատին , կը սիրեն , կը տառապին , ի՛նչ-
 պէս կը մղուիս սիրել զանոնք եւ ի՛նչպէս
 ինքզինքդ գոհ կը զգաս անոնց հետ տառա-
 պելուդ : Ի՛նչպէս կ'ըմբռնես որ հոտ է միայն
 ճշմարիտ հրճուանքը : Տառապանքին մէջն է
 ան , ինչպէս բալասանը վեհանձն ծառին վեր-
 քին մէջն է :

Կիրքը սպաններ են ատոնք , ու նոյն հա-
 բուածով սպաններ են ուրախութիւնն ու ցա-
 ւը , տառապանքն ու հեշտանքը , բարին , չարը ,
 գեղեցիկութիւնը , վերջապէս ամէն բան , եւ մա-
 նաւանդ առաքինութիւնը : Իմաստուն են , եւ
 սակայն այլեւս բան մը չեն արժեր , որովհետեւ
 ճիշով միայն մարդ բան մը կ'արժէ : Ի՞նչ փոյթ
 որ իրենց կեանքը երկարաժեւ ըլլայ , եթէ
 զայն չեն կրնար լեցընել , եթէ զայն չեն կրնար
 ապրիլ : Այն խորհրդածութիւններով զոր ինծի
 կը ներշնչէ այս գիրքը մեծապէս կը նպաստէ ինծի
 սիրելի կացուցանելու մարդու վիճակը՝ որ
 սակայն դժնդակ է , զիս հաշտեցնելու այս ցա-
 ւաղին կեանքին հետ , վերջապէս ինծի յար-
 գել տալու իմ նմաններս եւ մարդկային
 մեծ համակրութիւնն ունենալու : Այս գիրքը
 սա տեսակէտով գերազանց է որ իրականու-
 թիւնը սիրել կուտայ եւ ցնորքի ու պատ-
 բանքի ողիին դէմ մեղ կը զոռչացնէ : Տաւերէ
 զերծ էակներ ցոյց տալով , մեղի ըմբռնել կու-
 տայ թէ այդ տխուր երանելիները մեղի չեն հա-
 ւասարիր եւ թէ մեծ յիմարութիւն մը պիտի
 ըլլար մեր կեանքը թողուլ (կնթաղըրելով որ
 կարելի ըլլար այդ) իրենցն ընդգրկելու համար :
 Օ՛հ , ի՛նչ ողորմելի երջանկութիւն : Ա՛լ
 կիրք չունենալով , արուեստչունին , եւ ի՛նչպէս

բանաստեղծներ պիտի ունենան . պիտի չկարենան ճաշակել ո՛չ դիւցազներգական քերթութութիւնը որ ատելութեան եւ սիրոյ կատաղութիւններէն կը ներշնչուի, ո՛չ ալ կատակերգակ քերթութիւնը որ մարդոց մոլութիւններուն ու խայտառակութիւններուն վրայ նուազայնօրէն կը խնդայ . ա՛լ չեն կրնար, խեղճ մարդիկ, երեւակայել Գրգոռներն ու Փեղդաները . ա՛լ չեն տեսներ այդ աստուածային ստուերները որ անմահ մրտենիներուն ներքեւ սարսուլով կ'անցնին :

Կոյր են ու խուլ՝ մարդոց աշխարհն աստուածացնող այդ բանաստեղծութեան հրաշքներուն : Վերդիլ չունին , եւ կ'ըսեն թէ երջանիկ են ատոնք, որովհետեւ «ասանսէօր»ներ ունին . եւ սակայն մէկ հատնիկ ոտանաւոր մը աւելի բարիք բրած է աշխարհիս քան թէ մտաղապօրծութեան բոլոր հրաշակերաները :

Անագործ՝ յառաջդիմութիւն , այդ չափագէտներու ժողովուրդը այլեւս ո՛չ կիրք ունի, ո՛չ բանաստեղծութիւն , ո՛չ սէր . աւա՛ղ , ի՞նչպէս պիտի կարենան սիրել , քանի որ երջանիկ են : Սէրը ցաւին մէջ միայն կը ծաղկի : Ի՛նչ են սիրահարներու խոստովանութիւնները եթէ ոչ անձկութեան աղաղակներ : «Աստուած մը իմ տեղս՝ ո՛րքան թշուառ պիտի ըլլար ,

կը գոչէ՝ սիրոյ թնիչի մը մէջ՝ անգլիացի բանաստեղծ մը : Աստուած մը , ո՛վ իմ սիրելիս , պիտի չկարենար տառապիլ , պիտի չկարենար մեռնիլ քեզի համար : »

Ներկնք ցաւին , եւ լաւ գիտնանք թէ անհրնար է երեւակայել երջանկութիւն մը աւելի մեծ քան այն զոր կը գտնենք այս մարդկային կեանքին մէջ , ա՛յնքան քաղցր եւ ա՛յնքան դառն , ա՛յնքան յոռի եւ ա՛յնքան բարի , միանգամայն իտէական ու իրական , եւ որ ամէն բան կը պարունակէ եւ ըստը հակապատկերները կը հաշտեցնէ : Հոս է մեր պարտեզը , զոր խանդով պէտք է բահել :

Ճշմարիտ նախանձոտին համար՝ ամէն բան խոռովիչ է , ամէն բան մտատանջութեան նիւթ մըն է , կին մը արդէն գինքը կը մատնէ՝ միայն անոր համար որ կ'ապրի ու կը շնչէ . կը վախնայ ներքին կեանքին այդ աշխատութիւններէն , մարմնոյն ու հոգւոյն այդ այլազան շարժումներէն որոնք այդ կինը իրմէ տարբեր արարած մը կը կացուցանեն , անկախ , բընազգական , տարակուսական եւ երբեմն անըմբռնելի : Կը տառապի որովհետեւ ան ինքերմէ կը ծաղկի՝ գեղեցիկ տունկի մը պէս , ա-

աանց որ ո եւ է սիրոյ զօրութիւն կարենայ
բանել ու իւրացնել այն բոլոր բուրուսը զոր
ան աշխարհիս կ'արձակէ՝ այն ալեծուր ըսպէին
մէջ որ երեւոտարգութիւնն ու կեանքն է :
Շիտակն ըսելով , անոր ուրիշ բան չի մեղա-
դեր բայց եթէ գոյութիւն ունենայր : Ատ է
որ հանդարտօրէն չի կրնար հանդուրժել :

Ան գոյութիւն ունի, կ'ապրի, զեղեցիկ է ,
կը մտածէ : Ի՞նչ մահացու մտատանջութեան
նիւթ : Կ'ուզէ այդ ամբողջ մարմինն ունենալ :
Կ'ուզէ զայն՝ աւելի ու լաւագոյն կերպով քան
ինչ որ բնութիւնը թոյլատրած է, եւ ամբողջ :

Կինը այս երեւակայութիւնը չունի: Շատ
հեղինջ որ իր մէջ նախանձ կը կարծուի , հա-
կատակորդութեան զգացումն է : Բայց այդ զգա-
յարանքներու չարչարանքը , այդ զգուելի տե-
սիլքներու յաճախանքը , այդ տխմար ու խըղ-
ճալի կատաղութիւնը , այդ ֆիզիքական մո-
լուցքը , ատի իրեն անձանօթ է բոլորովին , կամ
շատ քիչ ծանօթ : Այդ պարագային մէջ , իր ըզ-
գացումը շատ նուազ որոշ է քան մերը : Տե-
սակ մը երեւակայութիւն կայ որ շատ զարգա-
ցած չէ իր քովը , նոյն իսկ սիրոյ մէջ , եւ զգա-
նական սիրոյ . ձեւական երեւակայութիւնը ,
մարմնական պատկերներու որոշ զգացումը :
Մեծ տարտամութիւն մը իր տպաւորութիւն-

ները կը պարուրէ , եւ իր բոլոր կորովները
ձգտուած կը մնան պայքարին համար : Երբ նա-
խանձի , կը մաքառի՝ սաստկութեամբ ու խու-
րամանկութեամբ խառն յամառութիւնով մը ,
որուն անկարող է այր մարդը : Այն նոյն
խայթոցը որ մեր աղիքները կը պատռտէ ,
զինքը կը գրգռէ իր արշաւին մէջ : Երբ սի-
րածը ձեռքէն ելլէ , կը մաքառի տիրապե-
տութիւնը վերստանալու համար :

Այս պատճառով , նախանձը , որ մարդուն
մէջ ակարութիւն մըն է , կնոջ քով ուժ մըն է
եւ գործելու կը մղէ զայն : Աւելի յանդգնու-
թիւն կը քաղէ անկից քան զգուանք :

Տեսէք Ռասինի Հերմիոնը : Իր նախանձը
սեւ մուխերու ձեւով չ'արտաչնչուիր : Քիչ երե-
ւակայութիւն ունի : Իր տանջանքները ան
գութ պատկերներով քերթուածի մը չի փո-
խեր : Չ'երազիր, եւ ի՞նչ է նախանձը առանց ե-
րազի . ի՞նչ է նախանձը առանց մտալլկան-
քին եւ առանց տեսակ մը կատաղի մենամո-
լութեան : Հերմիոն նախանձոտ մը չէ . կ'ուզէ
ամուսնութիւն մը արգիլել , ամէն գնով կ'ուզէ
զայն արգիլել եւ սիրած մարդը նորէն իր
ձեռքն անցընել , ա՛յսքան :

Եւ երբ այդ մարդը կը սպաննուի իրեն
համար , իրմէն , զարմանք կը զգայ , ու մանա-

ւանդ յուսախաբի սրտնեղութիւն մը : Զուրբ
ինկած ամուսնութիւն մըն է : Իր տեղը՝ էրեկ
մարդ մը պիտի գոչէր . « Աւելի՛ աղէկ . այդ
կինը զօր կը սերէի , ոչ մէկունը պիտի չըլլայ
այլեւս : »

*
*
*

Մարդկային ազգը անկարող է անլախ-
ճանօրէն յառաջգիմելու : Որպէսզէն իրեն հա-
մար հնարաւոր ըլլար զարգանալ , պէտք եղած
է որ երկիրս գտնուէր Ֆիզիքական ու քլիմա-
ական տեսակ մը պայմաններու մէջ որոնք
մշտատեւ չեն : Եղաւ ատեն մը ուր մեր երկ-
րադունդը անընակելի էր մարդուն համար . շատ
տաք էր եւ շատ խոնաւ : Ատեն մը պիտի գայ ուր
անընակելի պիտի դառնայ նորէն . շատ պաղ
պիտի ըլլայ եւ շատ չոր : Երբ արեւը՝ մարի ,
ինչ որ անխուսափելի է , մարդիկ արդէն շա-
տոնց անհետացած պիտի ըլլան : Իրենց վեր-
ջիններն այնքան ամենազուրկ ու ապուշ պիտի
գտնան որքան առաջինները եղան : Շատոնց
արդէն մօռցած պիտի ըլլան բոլոր արուեստ-
ներն ու գիտութիւնները : Քարայրներուն մէջ
ողորմելի կերպով պիտի փութին , սառնամա-
նիքներուն եզերքը՝ որ այն ատեն իրենց թա-
փանցիկ զանգուածները պիտի թաւալեն ան-

կերպարան աւերակներուն վրայ քաղաքնե-
րուն ուր հիմա կը մտածենք , կը սիրենք , կը
տառապինք , կը յուսանք : Բոլոր կնճնիները ,
բոլոր թմբիները ցուրտէն մեռած պիտի ըլլան,
ու եղեւինները միայն պիտի տիրեն սառած
երկրիս վրայ : Այդ վերջին մարդիկը , յուսահատ՝
ստանց իսկ ատօր գիտակցութիւնն ունենա-
լու , ոչ մէկ տեղեկութիւն պիտի չունենան
մեր մասին , մեր հանճարին , մեր սիրոյն մա-
տին . եւ սակայն մեր նորածին զաւակները ,
մեր արիւնին արիւնը պիտի ըլլան անոնք :
Արքայական իմացականութեան տեղար մնացորդ
մը , իրենց թանձրացած գանկին մէջ վարա-
նատ , դեռ քիչ մը ատեն ալ պիտի պահպանէ ա-
նոնց գերազանցութիւնը արջերուն վրայ որ ա-
նոնց անձաւներուն շուրջը պիտի կուտակուին :
Ժողովուրդներն ու ջոկերը պիտի անհետանան
ձիւնին ու սառոյցին ներքեւ , հին աշխարհին
քաղաքներուն , արահետներուն , պարտէզնե-
րուն հետ : Քանի մը ընտանիք հազիւ պիտի
մնայ : Կին , տղայ , ծերունի , ամենը խառնի-
խուռն թմբած , իրենց քարայրներուն ծերպե-
րէն պիտի տեսնեն իրենց գլխուն վերեւ արբա-
ժօրէն բարձրանալը մուսլ արեւի մը , որմէ ,
ինչպէս մարելու մօտ խանձողէ մը , շէկ նշոյլ-
ներ պիտի սլանան , մինչդեռ աստղերու շրա-

ցուցիչ ձիւն մը ցորեկն ի բուն պիտի շարունակէ շողալ սեւ երկնքին մէջ, սառնային օդին մէջէն : Ահա ինչ որ պիտի տեսնեն . բայց իրենց ապշացմանը մէջ, պիտի չգիտնան իսկ թէ բան մը կը տեսնեն : Օր մը, իրենցմէ վերջինը առանց ատելութեան եւ առանց սիրոյ պիտի արձակէ մարդկային վերջին շունչը թշնամի երկինքն ի վեր : Եւ երկիրը պիտի շարունակէ թաւալիլ, անձայն միջոցներուն մէջէն քաշելով տանելով մարդկութեան աճիւնը, Հոմերի քերթուածներն ու յունական մարմարներուն վեհաշուք բեկորներն՝ իր սառուցիկ կողերուն կպած : Ու ոչ մէկ մտածում այլեւս պիտի սըլանայ դէպ ի անհունը, այս երկրագունդին ծոցէն՝ ուր հոգին ա՛յնքան յանդգնեցաւ, դոնէ ո՛չ մէկ մարդկային մտածում : Որովհետեւ ո՞վ կրնայ ըսել թէ այն տանն ուրիշ մտածում մը ինք իրեն գիտակից պիտի չգառնայ, եւ թէ այդ գերեզմանը ուր ամենքս պիտի քնանանք նոր հոգիի մը օրօրանը պիտի չըլլայ : Ո՞ր հոգիին, չեմ գիտեր : Միջատին հոգւոյն թերեւս :

Մարդուն քովն ի վեր, հակառակ մարդուն, միջատները, մեղուններն՝ օրինակի համար, եւ մրջիւնները, հրաշալիքներ գործած են արդէն : Ճշմարիտ է որ մրջիւններն ու մեղունները մեզի պէս պէսօք ունին լոյսի ու

տաքութեան : Բայց նուազ մսկոտ անողնաւորներ կան : Ո՞վ գիտէ ապագան որ սահմանուած է անոնց աշխատութեանն ու համբերութեանը :

Ո՞վ գիտէ թէ երկիրս անոնց համար յարմարագոյն պիտի չգառնայ երբ մեզի յարժար ըլլալէ դադրի : Ո՞վ գիտէ թէ օր մը իրենց եւ աշխարհիս գիտակցութիւնը պիտի չունենան : Ո՞վ գիտէ թէ անոնք ալ՝ իրենց կարգին՝ Աստուած պիտի չփառաբանեն :

* * *

Շատ ճօխ ու շատ բաց մտքով անզգիացի երկրաբան մը, Սըր Չարլզ Լայքըլ, քառասուն տարիի չափ առաջ հաստատած է ինչ որ «մըշտագործօն պատճառներու տեսութիւնը» կ'անուանեն : Ապացուցած է թէ այն փոփոխութիւնները որ դարերու ընթացքին մէջ կատարուած են երկրիս երեսին վրայ, ոչ թէ յառաջ են եկած յանկարծական յեղաշրջութիւններէ՝ ինչպէս կը կարծուի : այլ արդիւնքն են անզգալի ու դանդաղ պատճառներու սրտնք դեռ այսօր իսկ չեն դադրած գործելէ : Իրեն համեմատ, այդ մեծ փոփոխութիւնները որոնց հետքերը մեզ կը դարձացնեն, այդքան ահաւոր կ'երեւան ժամանակին կարճեցումովը միայն,

մինչդեռ իրօք շատ յամբօրէն կատարուած են : Առանց մոլեգնութեան է որ ծովերն իրենց տեղը փոխեցին եւ սառնամանիքներն իջան դաշտերուն մէջ՝ որոնք ատենով ծառածեւ պտերներով ծածկուած էին :

Նմանօրինակ կերպարանափոխութիւններ կը կատարուին մեր աչքին առջեւ , առանց որ կարենանք նշմարել դանտնք : Հոն՝ վերջապէս՝ ուր Քիւլփէ զարհուրելի զգրդումներ կը տեսնէր , Չարլզ Լայքը բնդի ցոյց կուտայ բընական ուժերու բարեգութ յամբութիւնը : Կը զգանք թէ ո՛րքան աղ մշտագործօն ուժերու տեսութիւնը բարեբար պիտի ըլլար եթէ կարենայինք զայն Ֆիզիքական աշխարհէն բարոյական աշխարհը փոխադրել եւ զայն կեանքի կանոն մը դարձընել : Պահպանողական ոգին եւ յեղափոխական ոգին անոր մէջ հաշտութեան միջավայր մը պիտի դառնէին :

Պահպանողականը այլեւս պիտի չհակառակէր անհրաժեշտ փոփոխութիւններուն համոզուելով թէ անոնք անզգալի կը մնան երբ յարատեւական եղանակով մը տեղի կ'ունենան , եւ վախնալով որ քանդողական ուժեր կը կուտակէ այն կէտին վրայ ուր խոչընդոտը դրած պիտի ըլլայ : Եւ յեղափոխականն ալ պիտի հրաժարէր անխոհմօրէն զրգօնէ կորովները :

գիտնալով որ անոնք միշտ գործօն են : Որքան կը մտածեմ այս բանին , այնքան կը համոզուեմ որ եթէ մշտագործօն պատճառներու բարոյական տեսութիւնը մարդկութեան խղճին մէջ թափանցէր , երկրիս բոլոր ժողովուրդները իմաստուններու հանրապետութեան մը պիտի փոխէր : Միակ դժուարութիւնը զայն հոն մտցընելն է , եւ խոստովանելու է որ այդ դժուարութիւնը մեծ է :

*
*
*

Կա՞յ պատմութիւն մը որ անկողմնակալ ըլլայ , եւ ի՞նչ է պատմութիւնը : Անցեալ դէպքերու դրաւոր պատկերացումը : Բայց ի՞նչ է դէպք մը : Ո եւ է իրողութիւն մըն է : Ո՛չ , նշանաւոր իրողութիւն մըն է : Արդ , ի՞նչպէս պատմաբան մը կը դատէ իրողութեան մը նըշանաւոր ըլլալը կամ չըլլալը : Կամայականօրէն կը դատէ , իր ճաշակին եւ նկարագրին համեմատ , ուղած ձեւովը , մէկ խօսքով՝ այնպէս ինչպէս արուեստագէտ մը պիտի ընէր : Որովհետեւ իրողութիւնները իրենց ուրոյն բնութեամբ չէ որ պատմական եւ ոչ-պատմականի կը բաժնուին : Իրողութիւն մը անհունօրէն բարդ բան մըն է : Պատմաբանը պիտի կարենա՞յ իրողութիւններն իրենց բարդութեանը մէջ ներկայացնել : Ատի անչարելի է :

Չանոնք պիտի ներկայացնէ՝ զիրենք կազմա-
 ւորող բոլոր մասնաւորութիւններէն մերկա-
 ցած , հետեւաբար կտրատուած , հաշմուած , ի-
 րենց բուն եղածէն տարբեր : Գալով իրողու-
 թեանց իրարու միջեւ ունեցած առնչութիւն-
 ներուն , չխօսինք այդ մասին : Եթէ պատմա-
 կան համարուած իրողութիւն մը արգիւնքն է
 —ինչ որ կարելի , ինչ որ հաւանական է , —
 մէկ կամ մէկ քանի ոչ-պատմական եւ ատով
 իսկ անծանօթ իրողութիւններու , պատմա-
 բանը ի՞նչպէս պիտի կարենայ նշանակել այդ
 իրողութեանց առնչութիւնը եւ անոնց կա-
 պակցութիւնը : Եւ այս բոլոր ըսածներուս մէջ
 գեռ կ'ենթագրեմ թէ պատմաբանը ձեռքին
 տակ ստոյգ վկայութիւններ ունի , մինչդեռ
 իրականութիւնն այն է որ կը խարեն զինքը ,
 եւ զգացման պատճառներով է միայն որ իր
 Վստահութիւնը կը շնորհէ այս կամ այն վը-
 կային : Պատմութիւնը գիտութիւն մը չէ , ա-
 բրուստ մըն է : Երեւակայութիւնով միայն կը
 յաջողին անոր մէջ :

* * *

J

— Այն հրապոյրը որ ամենէն աւելի կ'աղղէ
 հպիներուն վրայ , խորհուրդին հրապոյրն է :

Չկայ գեղեցկութիւն առանց քօղի , եւ մեր ա-
 մենէն շատ սիրած բանը՝ նորէն անծանօթն է :
 Ապրիլը մեզի համար անհանդուրժելի պիտի
 ըլլար , եթէ չերազէինք երբեք : Ինչ որ կեան-
 քը ունի լաւագոյն , այն գաղափարն է զոր
 ան մեզի կուտայ բանի մը մասին որ իր մէջը
 գոյութիւն չունի : Իրականը գէշ ազէկ մեզի
 կը ծառայէ քիչ մը իտէալ յօրինելու : Թերեւս
 իր մեծագոյն օգտակարութիւնն է աս :

* * *

Երբ կ'ըսենք թէ կեանքը բարի է եւ երբ
 կ'ըսենք թէ յոռի է ան , անիմաստ բան մը
 ըսած կ'ըլլանք : Պէտք է ըսել թէ կեանքը բա-
 րի է եւ յոռի միանգամայն , որովհետեւ անով
 եւ միմիայն անով է որ բարիին ու յոռիին
 գաղափարը ունինք : Ճշմարտութիւնը այն է թէ
 կեանքը զմայլելի , ահօելի , սիրուն , զազիր ,
 անուշ , դառն է , ամէ՛ն բան է ան : Բարի Յլո-
 բիանին «արլըքէն»ին կը նմանի : Մէկը զայն
 կարմիր կը տեսնէ , միւսը՝ կապոյտ , եւ եր-
 կուքն ալ զայն կը տեսնեն ինչպէս որ է , քանի
 որ կարմիր ալ է , կապոյտ ալ է , ամէն գոյն
 ունի : Ասի պէտք էր մեզ ամենս իրարու հա-
 մամիտ դարձնէր , եւ հաշտեցնէր փրկստիա-
 ները որ իրար կը բզքտեն , Բայց մենք այնպէս

չինուած ենք որ կ'ուզենք ուրիշները բռնա-
գասել մեզի պէս զգալու եւ մտածելու եւ
թոյլ չենք տար մեր դրացիին որ զուարթ ըլ-
լայ երբ մենք ախուր ենք :

*
*
*

Որքան կը մտածեմ մարդկային կեանքին
վրայ, այնքան աւելի կը համոզուիմ թէ անոր
իբրեւ վկայ եւ իբրեւ դատաւոր պէտք է տալ
Հեզնութիւնն ու Գթութիւնը, ինչպէս Նզիպ-
տացիք իրենց մեռելներուն վրայ Իսիս դի-
ցուէին եւ Նեփթիս գեղուէին կը կանչէին
Հեզնութիւնն ու Գթութիւնը երկու բարձ-
րորհրդատուներ են. մին, ժպտելով, կեանքը
մեզի հաճելի կը դարձընէ. միւսը, որ կուլայ,
դայն նուիրական կ'ընէ մեզի: Այն Հեզնու-
թիւնը որուն կ'ակնարկեմ, անդու չէ: Ոչ ոէրը
կը ծաղրէ, ո'չ գեղեցկութիւնը: Քաղցր է եւ
բարեացակամ: Անոր ծիծաղը բարկութիւնը
կ'իջեցնէ, եւ ան է որ մեզի կը սորվեցնէ
ծաղրել չարերն ու անմիտները, որոնց համար
առանց իրեն՝ ատելութիւն զգալու տկարու-
թիւնը կրնայինք ունենալ:



ԳԻՆ

ՄԷԿ ՏՐԱՆՏ

ՀԻՆԱ 10 ԿՈՍ